ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 294Ա

«15» ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025Թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ «ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված «Համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման» կարգի 7-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի «Բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի մրցութային հանձնաժողովի կազմում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչների թեկնածությունները՝ համաձայն սույն որոշման հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

Signed by: ARSENYAN VAHAGN 2708930639

Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

ք. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2025
թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 284-Ա որոշման

ՑԱՆԿ

ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքում համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի մրցութային հանձնաժողովի կազմում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչների թեկնածուների

հհ	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ներկայացուցչի թեկնածուի անուն, հայրանուն, ազգանունը	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ներկայացուցչի թեկնածուի զբաղեցրած պաշտոնը	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ներկայացուցչի թեկնածուի գործունեության համակարգման ոլորտը
1.	Նաիրի Սպարտակի Սարոյան	Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետի տեղակալ	Բնապահպանության ոլորտ
2.	Գվիդոն Հեկտորի Հարությունյան	Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ	Քաղաքաշինության ոլորտ